

կը տեսնէր Հայոց քով ալ (Գ): Սա չի բացայայտեր նպատակը, բայց բնական- նապէս կը գործածուէր խմոր շաղելու եւ այլ յայտնի ծառայութեանց:

Սակայն Պիւնդ նիւթեր մանրելու կամ փոշիացնելու յատուկ գործի, այսպէս կոչուած Նոննոսէ, կաղանկայտուացիէն եւ Լամբրոնացիէն (Հյկզ.), եւ տեղ մը նաեւ «անկան» (Թիւք, ԺԱ, 8): Արեւմտեայց քով կը լինէր սովորաբար գոգաւոր ու խոր, զանազան մեծութեամբ ու պէսպէս նիւթերէ՝ նպատակին համեմատ (Դար. Գ, 2008-9). իսկ եգիպտական քանդակաց մէջ կոնաձեւ է, դէպ ի վեր լայնագոյն, եւ շրթանց մօտ երկու մանեկաձեւ կանթերով (Վիգ. Բ, 1147): — Ունէր իւր տափանը, «սանդիտուն» (Առկ. Գ, 31) կամ լոկ «տուն» կոչուած (Լմբր. ի Հյկզ.), հասարակօրէն երկայն ձողաձեւ եւ անհասար թանձրութեամբ՝ ըստ եգիպտացւոց եւ արեւմտեայց:

Թափուր: Յիշուած է Աւակայ որդիէն (Գ), զոր Հայկազեանը կը մեկնէ անորոշաբար՝ «փայտեղէն ափսէ, սկուտեղ, տաշտ», ըստ որում, ինչպէս կ'իմանամ, Հայաստանի մէջ ցարդ «տեփուր» կը կոչուի տաշտաձեւ բոլորակ ու ծանծաղ անօթ մը, որով հաց եւ նման նիւթեր կը տանին ի սեղան: